## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու
մարզի Նորաշեն համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ.
Նորաշեն, Կ:Դեմիրճյան 116, Հեռ. 093 47 54 48 ,
norashen.lori@mta.gov.am

N 123-2017
*11/07/2017թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ա. Նալբանդյան Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Նորաշեն համայնքի ավագանու թիվ 11, 12, 13-Ա,14-Ն որոշումները և համայնքի ղեկավարի թիվ 42 որոշումը:

Առդիր՝ 5 թերթ:

11.07.2017

**Համայնքի ղեկավար՝** X ______________ **ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

*Կատ.`*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Նորաշեն համայնք,գ. Նորաշեն
Հեռախոս՝ 093475448
Էլ.Փոստ՝ norashen.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» «հուլիսի» 2017 թվականի թիվ 11

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով՝

**Նորաշենի համայնքի ավագանին որոշում է.**

Ի գիտություն ընդունել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նորաշեն համայնքի ղեկավարի 2017 թվականի բյուջեի կատարման երկրորդ եռամսյակի հաշվետվության վերաբերյալ հաղորդումը:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| Բաղդասարյան | Արայիկ | | | |
| Բաղդասարյան | Իշխան | | | |
| Բաղդասարյան | Վալերյա | | | |
| Էլոյան | Արմինե | | | |
| Մարտիրոսյան | Ռաֆիկ | | | |
| Մկրտչյան | Մերուժան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՆՈՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՀՀ 07200741

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Նորաշեն համայնք,գ. Նորաշեն
Հեռախոս՝ 093475448
Էլ.Փոստ՝ norashen.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» «հուլիսի» 2017 թվականի թիվ 12

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ՀԱՇՎԵԿՈՒՌԸ 01.07.2017 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 23.10.2000 թվականի N-656 որոշմամբ՝

Նորաշենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նորաշեն համայնքի համայնքային հողերի հաշվեկշիռը համաձայն ձև N-22-ի առ 01.07.2017 թվականի դրությամբ:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| Բաղդասարյան | Արայիկ | | | |
| Բաղդասարյան | Իշխան | | | |
| Բաղդասարյան | Վալերյա | | | |
| Էլոյան | Արմինե | | | |
| Մարտիրոսյան | Ռաֆիկ | | | |
| Մկրտչյան | Մերուժան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՆՈՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Նորաշեն համայնք, հասցե գՆորաշեն,
հեռ.093475448 էլ. փոստ՝ norashen.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07 » հուլիսի 2017 թվական, 13 -Ա

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝

Նորաշեն համայնքի ավագանին

**որոշում է.**

1.Համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով կազմել մշտական գործող հանձնաժողով հետևյալ կազմով՝

1.Մկրտչյան Ամալյա - համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի նախագահ,
2.Գրիգորյան Արգինա --համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,
3Ասլանյան Էմմա --համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայող, հանձնաժողովի քարտուղար,
4.Մարտիրոսյան Ռաֆիկ --ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
5.Բաղդասարյան Վալերյա---ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
6.Մկրտչյան Արմինե ---համայնքի բնակիչ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
7.Պողոսյան Կառլեն --համայնքի բնակիչ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ):

2. Հանձնաժողովին՝ ստացված դիմումները քննարկել դրանք համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո 7–օրյա ժամկետում և հանձնաժողովի եզրակացությունը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաղդասարյան Արայիկ | [signature] | | |
| Բաղդասարյան Իշխան | [signature] | | |
| Բաղդասարյան Վալերյա | [signature] | | |
| Էլոյան Արմինե | [signature] | | |
| Մարտիրոսյան Ռաֆիկ | [signature] | | |
| Մկրտչյան Մերուժան | [signature] | | |

Նորաշեն համայնքի ղեկավար՝ [signature] Ա. Բաղդասարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Նորաշեն համայնք, հասցե գ.Նորաշեն հեռ.093475448,
էլ.փոստ norashen.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07»հունիսի«2017»թվականի թիվ 14-Ն

ՆՈՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի «ՆՈՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 25-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և 70-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Նորաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Նորաշենի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի «Նորաշենի համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 25-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ՝ կողմ դեմ ձեռնպահ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Բաղդասարյան | Արայիկ | | | |
| Բաղդասարյան | Իշխան | | | |
| Բաղդասարյան | Վալերյա | | | |
| Էլոյան | Արմինե | | | |
| Մարտիրոսյան | Ռաֆիկ | | | |
| Մկրտչյան | Մերուժան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա. Բաղդասարյան

գ. Նորաշեն
07. հունիսի 2017թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՆՈՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Նորաշենի համայնքապետարան, գ. Նորաշեն
հեռ.093475448 էլ. փոստ norashen.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**«07» հուլիսի 2017 թվականի թիվ 42**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Նորաշեն համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 07-ի թիվ 14-Ն որոշումը՝

որոշում եմ.

1. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Նորաշենի համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման համամասնությունների եռամսյակային բաշխումը՝ ըստ հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել Նորաշեն համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի 25-ի «ՀՀ Լոռու մարզի Նորաշենի համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունների սահմանելու մասին» թիվ 2 որոշումը:

Համայնքի ղեկավար՝ Ա. Բաղդասարյան